

ՍԱՐԳՍԵԱՆԻ ԳԼԽԱՒՈՐԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ ՅՈՒՆԱՍՏԱՆ ԿԸ ՄԵԿՆԻ

ԵՐԵՎԱՆ, 2 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Յունաստանի պաշտպանության նախարար Ափոսթոլոս Աթանասիոս Յոխանովիչի հրահրած Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսեանի գլխավորած պատուիրակությանը Երեքշաբթի օր (այսօր) Յունաստան կը մեկնի մասնակցելու համար 35-ի 7 Հոկտեմբերին կայանալիք «Տիֆենտրի Ինթերնեշնալ-2000» միջազգային 11րդ ցուցահանդեսին:

Այցելության շրջագիծին մէջ նախարար Սարգսեան հանդիպումներ կ'ունենայ իր յոյն պաշտօնակիցին եւ վիճակագրական բարձրագույն այլ պաշտօնատարներու հետ:

Հանդիպումներուն պիտի քննարկուին երկկողմանի վիճակագրական գործակցության առնչուող հարցեր:

ԼԱՀՈՒՏ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ՎԱՅՐԱ ԳՈՒԹԻՒՆԸ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երէկ դատաւարտեց պաղեստինցի ժողովուրդին դէմ իսրայէլի գործած վայրագ ջարդերը, նկատելի տալով, որ անոնք շարունակութիւնն են 1948-էն սկսեալ անոր գործած ոճիրներուն:



Զօր. Լահուտ կ'ընդունի Աւստրալիոյ դեսպանը:

րու եւ արգելքներու հիմնական պատասխանատուն իսրայէլն է:

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց Ելեւանուտի նախարար ժորժ Գըրմի, ժողովրդային Համագումարի նախագահ Քամայ Շաթիլայի, Աւստրալիոյ դեսպան Ճոն Ֆէնրսիի, Վատիկանի

մէջ Լիբանանի դեսպան Յուստ Աուի, նորընտիր Երեսփոխան Մոհամէտ Պըրժաուիի, Երեսփոխան Իպրահիմ Ամին Սայէտի, Ղովմի կուսակցութեան նախագահ Ալի Քանտոյի եւ բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն ԿՕՐ. Ռեմուն Ապարի այցելութիւնները:

ՕԼՊԱՅԹ ԵՒ ՇԻՐԱՔ ԿԸ ՔՆՆԱԳԱՏԵՆ ՇԱՐՈՆԸ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՍՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ԶՈՏԵՐ ԿԸ ԽԼԵՆ

ՄՈՒՊԱՐԱՔ ԵՒ ԱՍԱՏ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՄԸ ԿՈՉ Կ'ԸՆԵՆ



Իսրայէլացի զինուորներ կը կրակեն...

Պաղեստինցիներուն եւ իսրայէլեան ուժերուն միջեւ ծայր տուած բախումները շարունակուեցան երէկ՝ 42-ի բարձրացնելով զոհերուն թիւը:

Իսրայէլեան ոստիկանութիւնը յայտնեց, որ ենթադրաբար պաղեստինցի վիճակներ սպաննած են հրեայ քաղաքային մը, Այսրորդանանի Պիտիա գիւղին մէջ: Հինգշաբթի օրուրէ ի վեր ծայր տուած բախումներուն ընթացքին առաջին քաղաքային հրեայ զոհը արձանագրուեցաւ երէկ: 42 զոհերուն 33 պաղեստինցիներ են, եօթը իսրայէլացի արաբներ, իսկ երկուքը՝ հրեաներ (սահմանապահ ոստիկան մը ու քաղաքային մը):

Մինչ բախումները կը շարունակուին, պաղեստինցի ու իսրայէլացի ղեկավարներ համաձայնեցան փորձեր կատարել դադարեցնելու համար արինահեղութիւնը: Ղեկավարներուն պատրաստակամութիւնն ու կամեցողութիւնը սակայն բաւարար չեն վերջ տալու համար բախումներուն, որովհետեւ դժուար է հանդարտեցնել կացութիւն մը, որ չափապակց լարուած է եւ զոհերուն թիւը՝ բարձր:

Ականատեսներ յայտնեցին, որ իսրայէլեան ապահովութեան ուժերն ու պաղեստինցիները երէկ բախում ունեցան Հեպրոնի մօտ գտնուող Պանի Անիմ գիւղին մէջ, ուր պաղեստինցի երեսուն ցուցարարներ վիրաւորուած են: Հեպրոնի մէջ վիրաւորուած էին երկու ուրիշներ:

Կապալի մէջ եւս բախումները սաստկացան երէկ: Պաղեստինցիներ ներխուժեցին իսրայէլեան վիճակագրական կեդրոն մը, ուր բախում ունեցան վիճակագրութեան կեդրոնը եւ այլեւս իսրայէլեան դրօշակը, յայտնեցին ականատեսներ: Անոնք աւելցուցին, որ բախումին մասնակցած են նաեւ պաղեստինցի ոստիկաններ, որոնք կը փորձէին հեռացնել քարեր նետող պաղեստինցի ցուցարարները, որոնցմէ մէկը սպաննուեցաւ:

Իսրայէլացիներն ու պաղեստինցիները վի-



Պաղեստինցիներ կը փորձեն պաշտպանուիլ:

րար կ'ամբաստանեն խոռվութիւնները հրահրելու յանցանքով: Խոռվութիւնները ծայր տուած էին անցեալ Հինգշաբթի օր, երբ Լիքուտ կուսակցութեան ղեկավար Արիէլ Շարոն Արեւելեան Երուսաղէմ այցելեց: Պաղեստինցիները կ'ըսեն, որ Շարոնի այցելութիւնը խոռվութիւնն ու լարուածութիւնն հրահրող արարք էր:

ՊԱՐԱՔ ԲԱՍՈՒՄՆԵՐՈՒՆ ՎԵՐՋ ՏՆՈՒ ԿՈՉ ԿՈՒՂՈՒ ԱՐԱՅԱԹԻ

Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաք երէկ վերստին կոչ ուղղեց պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի, որ վերջ տայ արինայի բախումներուն: Պարաք խոստացաւ ամէն միջոցի դիմել խաղաղութիւնը վերահաստատելու համար: Պարաք ըսաւ նաեւ, որ իսրայէլ պատրաստ է հրասայլեր գործածելու, դադարեցնելու համար արինահեղութիւնը եւ պաշտպանելու համար իսրայէլի քաղաքացիները:

Իսրայէլացի վարչապետը աւելցուց, որ կիրակի գիշեր հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցած է Արաֆատի հետ: Երկու ղեկավարներուն հաղորդակցութեան արդիւնքը տակաւին յստակ չէ եւ դժուար անհաւանական կը նկատեն, որ Պարաքի կոչին շուտով ընդառաջեն պաղեստինցիները:

Պաղեստինցիները, իրենց կարգին կ'ըսեն, որ իրենք չեն մեղաւորուել, այլ՝ իսրայէլացիները, որոնք բանակը ուժի դիմած է անպէս պաղեստինցիներուն դէմ: Անոնք դիտել կու տան նաեւ, որ իսրայէլեան ուժերը չեն յարգած տաք բախումներու վայրերէն հեռանալու խոստումը: Պաղեստինցի պաշտօնատարներ կը յայտնեն նաեւ, որ ոստիկանութիւնը իր-կարեւոր կ'ընէ այդ վայրերէն հեռու պահելու համար ցուցարարները:

Իսրայէլի պաշտպանութեան փոխ նախարար Էֆրայիմ Մնէ պաղեստինցիները ամբաստանեց բախումները հրահրելու եւ նոյնիսկ կապմակերպելու յանցանքով: Ան աւելցուց, որ իսրայէլ պատրաստ է շարունակելու խաղաղութեան գործընթացը, բայց ո'չ այս լարուած մթնոլորտին մէջ: Ան շեշտեց, որ բախումները անմիջապէս պէտք է դադարին:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլինթըն կոչ ուղղեց իսրայէլացիներուն ու պաղեստինցիներուն, որ անմիջապէս դադարեցնեն բախումները, որոնք 1996-էն ի վեր ամէնէն արինային կը նկատուին:

Արաֆատի խորհրդատու Նապիլ Ապու Ռուտայնա ըսաւ, որ հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին, Բիլինթըն շեշտած է կարեւորութիւնը պաղեստինեալիսրայէլեան գործընթացին փրկութեան: Ռուտայնա աւելցուց, որ իսրայէլացիներն ու պաղեստինցիները հաւանութիւն տուին զօրավիճակ կանգնելու ամերիկեան Շար-ը՝ էջ 3

ՍՈՒՐԻԱ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԿԸ ՊԱՀԷ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՍՈՒՊԱՐԱՐ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ երէկ յայտարարեց, որ Դամասկոս կը հետապնդէ արդար եւ ամբողջական խաղաղութիւն մը, որուն մաս կը կազմեն երեք կողմերու առաջին կողմը՝ Սուրիա-Լիբանանն է, երկրորդ կողմը՝ Իսրայէլն է եւ երրորդ կողմը՝ հովանաւոր երկիրը՝ Միացեալ Նահանգները:



Նախագահներ Ասատ եւ Մուպարաք մամլոյ ասուլիսի ընթացքին:

Սուրիացի յայտնեց, որ Սուրիա Լիբանանի մէջ կը պահէ հաւասարակշռութիւնը տարբեր հաստատուններու միջեւ, որպէսզի Լիբանանի կացութիւնը պահպանուի. ասիկա շատ կարեւոր է:

Նախագահ Ասատ ըսաւ, որ Սուրիա կը յարաբերի Լիբանանի հետ պետութեան մակարդակի վրայ եւ մանրամասնութիւններով չի վրայիլ: Ան կը պատասխանէր Լիբանանի մէջ սուրիական ուժերու վերադաստորոման վերաբերող հարցումի մը:

«Սուրիական ուժերու հեռացման գծով ազմուկը աւելի տեղեկատուական է» աւելցուց ան: (Ասուլիսին մասին նաեւ տեսնել պաղեստինցիներու եւ իսրայէլացի վիրաւորներու միջեւ բախումներու լուրին մէջ):

ԵՆՈՒԿՈՍՆԱԻՍ ԱՆԻՍ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԻԸ ԱՆԴԱՄԱՆՈՒԾԵՑ ԲԱԶՄԱԹԻԻ ՔԱՂԱՔՆԵՐ

Սերպիոյ տարածքին երէկ քաղաքային անհնապան դուրսէն արշաւ մը ծայր տուաւ՝ եռկոսյալիոյ նախագահ Սլոպոտան Միլոշեւիչի ընդդիմադիրներուն պահանջով, որ ընդունարարներ ձմաւաւներ փակեցին, հանրապետութեան գործադուրի դիմեցին, դպրոցականներ մերժեցին դպրոց յաճախել: Սերպական բազմաթիւ քաղաքներ անդամալուծուեցան:

Պելկրատի մէջ կէսօրին արդէն հապարաւոր մարդիկ սկսած էին հաւաքուիլ մայ-

րաքաղաքին կեդրոնը: Ընդդիմադրութիւնը երկրի տարածքին ընդհանուր գործադուրի կոչ ուղղած է պարտադրելու համար Միլոշեւիչին, որ ընդունի, թէ իր թեկնածուն՝ Վոյսլայ Բոսթոնիցա, Սեպտեմբեր 24-ի նախագահական ընտրութիւններու առաջին հանգրուանին յաղթանակ ապահոված է:

Ընտրական պետական յանձնարարները կ'ըսէ, թէ Բոսթոնիցա քուէներու անհրաժեշտ 50 առ հարիւրը չէ

ապահոված, հետեւաբար ընտրութեանց երկրորդ հանգրուանի մը կայացումը հրահանգած է: Ընդդիմադրութիւնը կը յայտնէ, թէ պոլքթի պիտի ենթարկէ այդ ընտրութիւնները:

ՈՌՈՒՄՈՅ ԵՒ Մ. ՆԱՇԱԿՆԵՐՈՒ ԴԵՄ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆԵՐ

Քոսթոնիցա երէկ Պելկրատի մէջ մամլոյ ասուլիսի մը ընթացքին Մոսկուան անվրձնակալութեամբ եւ

Շար-ը՝ էջ 2

ՁԳԵՑԷ ՈՐ ՁԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՐԱՋԷ ՁՍԵՆԸ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԸ ՄԻՆՉԵՒ 15 ՆՈԿՏԵՄԲԵՐ ԳՆԵՑԷ

- Առանց կանխավճարի 12 ամսուան մասնավճարով եւ առանց տոկոսի:
- Առաջին մասնավճար 1 Դեկտ. 2000-ին:
- 2000-2001-ի Գոր հաւաքածոյ:

Ի 20ՐԹԷ Ե ՆԱԷ ՀՈՍԵՒԵՒԻ ՍՕՏ

Անթիլիաս 04-403173, Պատար 01-382772, Պոլրճ Կամուտ 01-265625,

tapirama Զգէ որ բնակարանը երազէ

Սարպա 09-636920, Թրիփոլի 06-441248:

COLLECTION 2000-2001

VUE & VIE

ԵՐԶԱՆԱԿ + ՏԵՆՈՂԱԿԱՆ ԱՊԱԿԻ 58.000 Լ.Ո.

ԵՐԶԱՆԱԿ + ՏԵՆՈՂԱԿԱՆ ԱՊԱԿԻ 78.000 Լ.Ո.

Zalka	Caravelle Center	ABC	Dbayeh
Verdun	Concorde Galleria	Abraj	Furn el Chebbak
Verdun	Dunes	Duty Free Shops	Beirut Airport

Չար-ը՝ էջ 2

ՏԵՏԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԸՍԻ

Երեսփոխան Արթուրյան Տետեան երկ կայե- լեց վարչապետ Սեյիմ Հըսի ապա յայտարարեց, որ Հըսի հետ քննարկած է ընդհանուր վարգա- ցումները: Ան նկատել տուա, որ տիրող հա- մայնքային ու դաւանական մթնոլորտը ոչ ռի նպաստաւոր է:

Երեսփոխան Տետեան ըսաւ, որ Հըսի նաե՛ յայտնած է իր ընդդիմութիւնը ազգային խորհրդ- դատողով մը գումարելու առաջարկին, որովհե- տե կայ խորհրդարան մը, որ պէտք է ստանձնէ իր ազգային եւ առաջնորդող դերը մանաւ հար- ցերու լուծման մէջ, գործակցաբար հանրապե- տութեան նախագահին ու կառավարութեան հետ:

«Արծարծած հարցերու շուրջ համակարծիք էինք, մանաւանդ ինչ կը վերաբերի համայնքա- յին դրութեան շնջումին, որ որոշումով չի կա- տարուիր այլ երկար տեւողութեամբ երթ մըն է, ըսաւ ան:

ՈՒԺԱՆԻԻԹԻ ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Չրէյեկտրականութեան եւ քարիղի նախա- րար Սիւլէյման Թրապուլսի երկ բացումը կա- տարեց Էսքուայի կայմակերպած վերանորո- թուող ուժանիւթի աղբիւրներուն գործածու- թեան մասին գիտածողովը, որուն կը մասնակ- ցին արաբական ու շրջանային երկիրներէ եւ միջազգային կայմակերպութիւններու ներկա- յացուցիչներ եւ մասնագէտներ:

Իր խօսքին մէջ Թրապուլսի յայտնեց, որ Լի- բանան այժմ կ'արտադրէ 1400 մէկաուաթ, մինչ պահանջը գազաթնակետի պահերուն կը հասնի 1700 մէկաուաթի. ան յոյս յայտնեց, որ ապագա- յին կարգ մը ծրագիրներու շնորհիւ կարելի կ'ըլ- յայ արտադրել 2150 մէկաուաթ:

«2000 տարուան ընթացքին Լիբանան մէկ մի- լիառ ամերիկեան տոլարի վառելանիւթ ներա- ծած է», ըսաւ Թրապուլսի, նկատել տալով, որ Լիբանանի ելեկտրածին կայաններուն մեծ մա- րը վառելանիւթով կը բանի, որովհետեւ շուրջը բանող կայաններու արտադրութեան համեմա- տութիւնը չնչին է:

Նախարարը նաեւ նկատել տուաւ, որ Լիբա- նանի «պայծառ արեւու ժամեր»ուն թիւը շատ մեծ է, հետեւաբար անհրաժեշտ է օգտագործել այն առաւելութիւնը, որ արհեստագիտութեան շնորհիւ կարելի է վերածել ջերմութի կամ ելեկտրականութեան, ծանր բեռ մը թեթեւնե- լով ազգային տնտեսութեան ուսերէն եւ նպաս- տելով կենսոլորտին:

ԸՆԴՀԱՆՍՈՒՅԵԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ...

Շարունակուած Ա. Էջեց

Ուաշինկթընը անուղղակիօրէն Միլոշեւիչի դատին օժանդակելու յանձնարարներով ամբաս- տանեց:

Քոսթունիցա ըսաւ, թէ ռուսերը, որոնք առա- ջարկած են միջնորդել սակայն հակասական յայտարարութիւններ կատարած են, տակաւին չեն որոշած, թէ ի՞նչ պիտի ընեն:

Ան շեշտեց, որ ռուսերը «յստակ եւ շօշափելի կեցուածք չունին Եուկոսլաւիոյ կացութեան մա- սին»:

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին երկ կատարուող յայտարարութեան մը մէջ առաջարկ- կած է միջնորդել Միլոշեւիչի եւ Քոսթունիցայի միջեւ, անոնց ակնարկելով իրեն ընտրութեանց երկրորդ հանգրուանի թեկնածուներ:

Քոսթունիցա յստակ դարձուց, որ Հոկտեմբեր 8ին կայանալիք ռեւէն ընտրութիւն պօրիսի պիտի նկատուի:

Միւս կողմէ, ան ըսաւ, որ Միացեալ Նահանգ- ներ օգնած են, որ նախագահական ընտրու- թիւները Միլոշեւիչի համար գոյատեւման հարց ըլլան, պնդելով, որ ան պէտք է դատուի ՄԱԿի մէկ ատենանին մէջ՝ պատերազմական ռճիրներու յանցանքով:

«Խորքին մէջ, ամերիկեան ներկայ վարչա- կարգին կարգ մը անձնատրուութիւններուն հա- մար Միլոշեւիչի պարագան կենաց - մահու հարց կրնայ ըլլայ», յայտնեց ան, ակնարկելով Ուաշինկթընի վճռակամութեան՝ Միլոշեւիչը իշ- խանութեան հեռացնելու նախքան ամերիկե- ան նախագահական ընտրութիւններու կայա- ցումը:

Ընդդիմադրութեան թեկնածուն ըսաւ, որ Մերպիոյ տարածքին ծայր տուած բողոքի ցոյ- ցերը շատ աւելի ազդու են քան 1996ի տեղական ընտրութիւններէն ետք տեղի ունեցած ցոյցերը:

ԵՆԿԿԻ ԿՈՉԸ

Միւս կողմէ, ԵՄԿԿ երկ կողմ ուղղեց բոլոր եուկոսլաւներուն՝ ընդունելու ընդդիմադրու- թեան այն հաւաստիքը, թէ ընտրութիւններէն

ՀԸՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԵՆ ԿԸ ՊԱՇՏՆՈՒՄ ԾՆՁԵԼ ԽՈՐԱՅԵԼԻ ԿՐԱՅ



Պէյրութի Ամերիկեան համալսարանի Գախագահը այցելեց Հըսի:

Վարչապետ Սեյիմ Հըսի երկ դիտել տուաւ, որ Այսրորդա- նանի եւ Կապաի դէպ- քերը այնքան վտան- գաւոր են, որ անհրա- ժեշտ է արաբական միացեալ կեցուածքով դիմագրաւել այս վար- գացումները եւ ճշուն մասնագէտներու միջազգային ընտանիքին վրայ, որպէսզի Խորալէի պարտադրէ վերջ դնել այս ջարդին:

Հըս կողմ ուղղեց գու- մարելու արաբական արտակարգ վեհաժո- ղով մը, քննարկելու համար այս վարգա- ցումները:

«Լրատու միջոցնե- րու հաղորդած այն պատկերը, ուր պա- ղեստինցի մանուկ մը կը նահատակուի իր հօր գրկին մէջ, արիւ- նով գրուած ու աշ- խարհի խիղճին ուղ- ղուած պատգամ մըն է, որպէսզի այդ խիղճը արթնայ եւ դատա- պարտէ Խորալէի կող- մէ Պաղեստինի երե- խաներուն, կիներուն, ծերունիներուն՝ եւ անմեղներուն դէմ գործուած ռճիրները», ըսաւ վարչապետը:

Հըս երկ ընդհա- նուր վարգացումները քննարկեց փոսթ հե- ռագրատան նախա- րար Իսմաիլ Նասմանի հետ, ապա ընդունեց վերաշինութեան եւ Բարգաւաճման Խոր- հուրդի նախագահ Մահմուտ Օսմանի, Պէյրութի Ամերիկեան համալսարանի նա- խագահ Ճոն Ուոլթըր- պրիի եւ այլ անձնա- տրուութիւններու այցե- յութիւնները:

ՊԵՐՐԻ Խորհրդարանի նա-

խագահ Նեպիի Պրրի արաբական կառավա- ղով մը, քննարկելու համար այս վարգա- ցումները:

«Խորալէի արաբե- րու դէմ գործած ռճի- րներուն առնչութեամբ ճշմարտութիւններու քողակերծման արա- բական խորհրդարա- նական յանձնա- խումբ»ի իբրեւ նախա-

գահ ուղղած իր պատ- գամին մէջ Պրրի պոլեւացուց, որ նոր- հայն այս ջարդերով Խորալէ կը փորձէ արաբ բնակչութեան պարպել Երուսաղէմը, շնջել անոր արաբա- կան, իսլամական եւ քրիստոնէական դի- մագիւղը, հրէականացը- նել քաղաքը, որպէսզի անոր վերաբերեալ որեւէ լուծումի պարա- գային պարտադրած ըլլայ իր պայմաննե- րը:

«ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ» ՊԼՈՔԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ

Ընկերվար Յառաջդի- մական կուսակցութեան ղեկավար, Երեսփոխան Ուալիա Ժոմպալսի զլիա- ւորած «ազգային պայ- քար» պլոքի անդամներ Մարուան Համաթէ, Աբ- ռամ Շըքալէյ, Ժորժ Տիւ- Նամէ եւ Ալաէտտին Թը- ոս երկ տուին մամլոյ միացեալ ասուլիս մը, որուն մէջ քննադատեցին 2001 տարուան պետական պիւտճէի նախագիծը, գոր- ելեմուտքի նախարարու- թիւնը յղած է վարչապե- տին:

Անոնք քոսին, որ նախա- գիծը շարունակած է կա- ոտարութեան ցարդ կի- րարկած ոճն ու քաղաքա- կանութիւնը, շափազան- ցած է պետական գան- ձարկի ակնկալուած հա- սոյթներու գումարը եւ նուազեցուցած՝ ծախսերը, պիւտճէական բացի ըն- դուները չաճմատուցելու մը ներկայացնելու հա- մար, առանց մտածելու, թէ առաջադրուած այս թիւերն ու գումարները իրագործելի են կամ՝ ոչ:

Երեսփոխանները նաեւ ըսին, որ այս նախագիծը անտեսած է քաղաքացիին, տնտեսութեան եւ ար- տադրողական մարզերու կարիքները, եւ գէշ անդ- րագրածներ կ'ունենայ պետութեան հաւաստիու- թեան վրայ:

ՕՍԽՈՒ ԿԱՍ ԿԱՐՉՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

●Մրցիչի մէջ: Հեռ. 03-294429:

ՕՍԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

●Հանքաշ փողոցին վրայ, 138 քառ. մէթր. նորակառոյց. գեղա- տեսիլ դիրք, քառ մէթր- քառ 3505 դիմել հեռ. 01-899718:

(Յարկաբաժինը ծա- խու է ամբողջութեամբ պատճառով):

ԲԱՆՏԱԴՐՈՒՄ
Տեր եւ տիկին Սերժ Եւ Արիս Գալուստեան բախտաւորուած են առջինեկ աղջիկ զաւակով մը
ՆԱՆԻ
30 Սեպտեմբեր 2000 Պէյրութ

ՔԱՐԱՄԷ ԵՒ ՄՈՒԱՌՈՒՄՍ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Մարոնիներու Նախալիա Սֆէյր պատրիար- ըք երկ ընդունեց նախկին վարչապետ Օմար Քարամէի եւ երեսփոխան Նախիւ Մուաւաթի այցելութիւնը. անոնց կ'ընկե- րակցէին Սամիր Ֆրեմի, Խալուսէ Շերիֆ եւ Սամի Մընքարա:

Սֆէյրի հետ տեսակցութեան ետք Քարա- մէ յայտարարեց, որ Լիբանան կը վերականգ- նի միայն ազգային միակամութեամբ եւ հասկացողու- թեամբ, հետեւաբար Պքերքէ կ'այցելեն այս հիման վրայ երկիօտութեան նպատակով, մանաւանդ որ լիբանանցիք իմնահարցերու շուրջ տարակարծիք են:

Մարոնի եպիսկոպոսներու կողմէ անդրա- դատուող՝ Քարամէ նկատել տուաւ, որ անի- կա կը մեկնի Սուրիոյ հետ առողջ յարաբերու- թիւններ ունենալու նախանախնդրութե- նէն, եւ վերահաստատեց, թէ հակառակ այդ կոչին կարգ մը կէտերուն եւ անոնց տրուած պատասխաններուն, պէտք չէ մոռնալ, որ այսպիսի հարցեր կը լուծուին տիպիկ մի- ջոցով:

«Յամենայնդէպս մենք պօրավիզ կը կանգ- նինք հանրապետութեան նախագահին յայ տարարած կեցուածքին, թէ Լիբանանի մէջ սուրիական ներկայութիւնը օրինական եւ ժամանակաւոր է, եւ նման հարցերը կը լուծ- ւին պետական սահմանադրական հաստա- տութիւններէն ներքէն», ակցուց ան:

Հարցումի մը պատասխանելով՝ Օմար Քարամէ ըսաւ, որ կը մերժէ հրաժարիլ Սա- միր Քարամէի սպանութեան գով «անձնա- կան իրաւունք»ի դատին, նկատի առած որ այդ ռճիրը անտեղի եւ անարդար էր, եւ վայն գործադրելու համար պարտադրուած էր բա- նակայիններու մասնակցութիւնը:

Յաջորդ կատարութեան կայմութեան առնչութեամբ՝ Քարամէ ըսաւ, որ այս գով կեցուածքը պիտի ճշուի քարեկամներու եւ դաշնակիցներու հետ խորհրդակցելէ ետք: «Ամէն պարագայի, հանրապետութեան նա- խագահը պարտաւոր է յարգելու վարչապե- տի նշանակումին գով երեսփոխաններու հետ իր խորհրդակցութիւններուն արդիւնք- ները», ըսաւ ան:

Համայնքային դրութեան շնջումին մասին Քարամէ ըսաւ, որ անվիլա Թանֆի մէջ համա- ձայնուած եւ սահմանադրութեան մէջ տեղ գտած որոշում է, զոր պէտք է գործադրել, բայց առաջին հերթին պէտք է պատրաստել այդ գործադրութեան ենթահողը:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

- Թագուիի Քէյէշեանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Գրիգոր Վարդանեան 50\$
- Էլիզ Քեօսէանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Գրիգոր Վարդանեան 50\$

ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

Խորապէս սգում ենք Հայ Աւետարանչա- կան Ընկերակցութեան գործադիր տնօրէն, երկար տարիներ չայ աւետարանական հա- մաշխարհային խորհրդի նախագահ, «Հա- յատան» համահայկական հիմնադրամի հո- գաբարձու՝ վերապատուելի Մովսէս Ճան- պապեանի վախճանը:
Անժամանակ մաղ մեզ պից խլեց նուիրեալ հային, պատուարման հոգեւոր առաջնոր- դին, պայծառ եւ պնդի անձնատրուութանը:
Վերապատուելի Մովսէս Ճանպապեանի կեանքը հայ ժողովրդի եւ հայրենիքի հոգե- տր վերելքին անխոնջ ծառայելու վառ օրի- նակ էր:
Մրտանց մեր ցաւակցութիւններն ենք յայտնում հանգուցեալի հարապատներին եւ բոլոր նրան ճանաչողներին:

ԼԻԲԱՆԱՆԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՄՊԱՆ ԱՐՄԱՆ ՆԱԻԱՍՏՐԳԵԱՆ

ՏՈՔԹ. ՎԱՉԷ ԳՈՒՐԳԵԱՆ (Յօդերու եւ ոսկորներու վիրաբուժ)

Յարգոյ հիւանդները կ'ընդունին իր սոր դար- մանատան մէջ, Չալքա, St. Rita շէք (Venise Vert վաճառատան վրայ), Ա. յարկ, հեռ. 01 - 881182 եւ 01 - 893507, ինչպէս նաեւ Ապու ժառուտ հիւանդանոց, ժլ էլ Տիպ, հեռ. 04 - 716000, 04 - 718000 կամ 03 - 848440:

MESROBIAN TECHNICAL COLLEGE
HONORABLE RESULTS IN THE OFFICIAL EXAMS 2000
KINDERGARTEN (JARDINIÈRE) 100% COMMERCIAL SCIENCE 75%
Morning, Afternoon & Night Classes
Technical Baccalaureate B.T.
Sales & Commercial Relations Kindergarten (Jardinière) Architecture Drawings Interior Design
Private Specializations (Officially Recognized)
• Computer Courses • Foreign Languages • Business Studies • Travel & Tourism "Ticketing" • Jewellery Design • Diamond Setting
• Wax Modeling • Make-Up • Hair Styling • Computer Repair "Hardware" • TV & Video Repair • Car Electricity
THE PIONEER IN TECHNICAL EDUCATION
New
1- Cambridge University Certificate 2- Private Classes 3- Incredible Payment Facilities
Arax Street, Bourj Hammoud Tel: 01 260 504 - 254 938/9 Fax: 01 262 955 Email: mesroba@dm.net.lb Web Site: www.mesrobian.com
1982

ԻՐԱԸ - ԶՈՒՆԵՅԹ ԼԱՐՈՒԿՆԵՐԻ ԿԱՏՈՒՄ

ՔԱՐԻՂԻ ՍԱԿԵՐՈՒ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Քարիղի սակերը բարձրացան երկկ, Իրաք - Քուեյթ նոր լարումներում լույսին տակ: Յուսուցիչ փաստաթղթերն մեկը կը նկատուի նաև Եւրոպական Միությունը, որ կը թուի, թե պիտի չհետեւի Միացեալ Նահանգներու օրինակին՝ բանալով քարիղի պահեստները:

Միջազգային շուկային վրայ, քարիղի տակադր երկ վաճառեցաւ 31 տոլարի: Մ ա ս ն գ է տ ն է ր կ'ըսեն, որ Քուեյթի եւ Իրաքի միջեւ լարումները պատճառ դարձած է, որ սակերը բարձրանան: Իրաք Քուեյթը կ'ամբաստանէ իր հողերէն քարիղ գողնալու յանցանք:

Իրաք կ'ըսէ, որ Քուեյթ քարիղը կը գողնայ խողովակի մը միջոցով, որ կառուցուած էր այն օրերուն, երբ Իրաք գրաւած էր Քուեյթը:

Իրաքի այս յայտարարութենէն մէկ օր առաջ Քուեյթ ՄԱԿի դիմած էր պահանջելու համար, միջոցառումներ որդեգրէ Պաղտատի դէմ, որ կը սպառնայ Օոցի Էմիրութեան: Քուեյթը կը պահանջէ նաև գրաւման օրերէն կորսուած նկատուած վեց հարիւր հոգիի վերադարձը:

● **Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն**
«Էրոֆլոթ» ընկերութիւնը յայտարարեց, որ իրաքեան օդանաւային ընկերութեան

հետ համաձայնութիւն մը կայացուցած է կանոնաւոր թռիչքներ կազմակերպելու դէպի Պաղտատ: Անիկա աւելցուց սակայն, որ թռիչքներուն վերսկըսելու թուականը տակաւին անորոշ է:

● **Ա Յ Ղ Ա Ն Ի Ս Ս Ա Ն Ի**
մէջ իշխող Թալեպան իսլամական շարժումը յայտարարեց, որ սահմանակից Իրանը արգիւծ է աֆղանեան օդանաւի մը Իրաք թռիչքը, որովհետեւ օդանաւը պիտի անցնէր Իրանի օդային սահմաններէն: Քապուլ աւելցուց, որ օդանաւը մարդասիրական օժանդակութիւններ կը փոխադրէր Իրաք:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ...

Շարունակուած Ա. Էջէն

հովանաւորութիւն վայելող եռակողմանի քննութեան մը: Սպիտակ Տունն այս հաստատած էր այս լուրը:

ՕԼՊԱՅԹ ԵՒ ԶԻՐԱՔ ԿԸ ԸՆՆԱԴԱՏԵՆ ԶԱՐՈՒՆԸ

Արտաքին գործոց նախարար Մատրլէյն Օլպարայթ երկ քննադատեց Շարունի իսլամական սրբավայր այցելութիւնը: Օլպարայթ ըսաւ նաև, որ մօտ օրէն Միջին Արեւելք այցելելու ծրագիրներ չունի:

Օլպարայթ, որ կը խօսէր Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հետ տեսակցութեան մը աւարտին, դիտել տուաւ, որ Շարունի այցելութիւնը անտեղի էր եւ պատճառ դարձած էր իտովութիւններուն հրահրման:

Շիրաք իր կարգին քննադատեց Շարունի այցելութիւնը, պայն անպատասխանատու քայլ մը ըսակելով: Շիրաք խօսքը ուղղելով Իսրայէլի, ըսաւ, որ ժողովրդային զգաղմունքներուն դէմ, հրասայելքով չէ որ կը կռուին:

Օլպարայթ աւելցուց, որ ինք եւ Շիրաք մտահոգուած են տիրող կացութեամբ եւ կը պահանջեն, որ անմիջապէս վերջ տրուի բախումներուն:

Իտալիոյ արտաքին գործոց նախարարը եւս երկ միացաւ Շարունը քննադատողներուն: Լամպերթո Տինի ըսաւ, որ Իսրայէլի մէջ տեղի ունեցող բախումները արդիւնքն են անպատասխանատու եւ անտեղի արարքներու:



Արաֆատ տեսակցեցաւ Ապտալլա թագաւորին հետ:

տիւնեան իրաւունքները: Համա կոչ ուղղեց պաղեստինեան իշխանութեան դադարեցնելու խաղաղութեան բանակցութիւնները Իսրայէլի հետ: Համասի ղեկավարներէն՝ Խալէտ Մեւլայ, ըսաւ, որ Երուսաղէմը բռնի ուժով գրաւած սիրականները, միայն ուժի եւ ընդդիմութեան ճամբով կրնան վերադարձնել պայն:

● **ՕՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՆ** դատապարտեց «Ռճրա- յի» արարքները, որոնք կը վայելեն Իսրայէլի կառավարութեան հովանաւորութիւնը: Լիկա- յին կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կը շեշտէր, որ Երուսաղէմ անբաժանելի մէկ մասն է պաղեստինեան գրաւուած հողերուն:

● **ՕՏՈՅԻ** արաբական երկիրները կոչ ուղղեցին միջազգային ընտանիքին, որ անմիջապէս միջոցառումներ որդեգրէ՝ վերջ տալու համար պաղեստինեան «ջարդ»ին: Օոցի Գործակցութեան խորհուրդին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը միջազգային ընտանիքին կը պահանջէ ճնշումներ բանեցնել Իսրայէլի վրայ:

● **ՀԱՉԱՐԱԻՐ** եմէնցիներ երկ բողոքի ցոյցեր կազմակերպեցին Սանաայի մէջ սրբապան պատերազմի կոչ ուղղելով: Ականատեսներ յայտնեցին, որ ինք հապար ցուցարարներ մասնակցեցան ցոյցին, որ բողոքի արտայայտութիւն էր Իսրայէլի եւ անոր կազմակերպած ջարդին դէմ:

Եգիպտոսի մէջ եւս կատարուեցան բողոքի ցոյցեր:

● **ՍՈՒՐԻՅԱ** մէջ տասնեակ հազարաւոր պաղեստինցիներ մասնակցեցան ցոյցի մը, բողոքելու համար պաղեստինցիներուն սպանութեան դէմ: Ցոյցին խօսք առնող ղեկավարները յայտարարեցին, որ սրբապան պատերազմը (Ժի- հատ) միակ ճամբան է իրենց իրաւունքներուն վերատիրացման համար: Ցուցարարները պահանջեցին նաև պաղեստինեան անկախ պետութեան հռչակումը, մայրաքաղաք ունենալով Երուսաղէմը:

● **ԻՐԱՆԻ** նախագահ Մոհամէտ Խաթամի ըսաւ, որ Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն հաստատելու համար մէկ միջոց կայ՝ կործանել Իսրայէլը: Ան աւելցուց, որ իսկական խաղաղութիւնը նուաճուած կ'ըլլայ, երբ գրաւուած հողերը վերադարձուին իրենց տէրերուն եւ գաղթական բոլոր պաղեստինցիները վերադառնան հայրենիք:

Իրանի գերագոյն ղեկավար այսօրու Ալի խամենէյի, իր կարգին, դատապարտեց Իսրայէլը, դիտել տալով, որ անոր պիւնտերները վայրագ արարքներու ձեռնարկած են պաղեստինցիներուն դէմ: Խամենէյի շեշտեց, որ հաւատքը պարտութեան չի մատնուի Իսրայէլեան փամփուռներով:

● **ԻՐԱՔ** դրուատիքով խօսեցաւ պաղեստինցի ժողովուրդին մասին, որ իննգ օրէ ի վեր կը պայքարի իսրայէլեան ուժերուն դէմ:

● **ՓԱՔԻՍՏԱՆ** դատապարտեց Իսրայէլը եւ կոչ ուղղեց ՄԱԿի, որ արագ միջոցառումներ որդեգրէ վերջ տալու համար սպանութիւններուն: Փաքիստան պահանջեց նաև, որ Իսրայէլ ենթարկուի ՄԱԿի որոշումներուն:

● **ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ՊՕՂՈՍ Բ.** պապը կոչ ուղղեց Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատման: Ան ըսաւ, որ կոչ կ'ուղղէ, որ վէսքերը լռեն, հրահրիչ երեւոյթները անհետանան եւ զոհ տուող ընտանիքները մխիթարուին:

● **ՖՐԱՆՍԱՅԻ** արտաքին գործոց նախարար Իպերի վետրին ամբաստանեց Շարունը, դիտել տալով, որ ան զիտունաւոր կերպով հրահրած է իսլամական շարժումները:

● **ՄԱԿԻ** ընդհանուր քարտուղար Քոֆի Անան կոչ ուղղեց Պարաքի եւ Արաֆաթի, որ իրենց առաւելագոյնը ընեն վերջ տալու համար արիւնահեղութեան, որ չափապանց մտահոգիչ երեւոյթ է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՍԻՆԻՍՏ ԻՍՐԱԸԻՆ ՄԷՂ

ՌՈՒՍԻԱ - ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

ՊՐԻԻՔՍԷԼ, 2 (ՌՈՅ- ԹԸՐԸ)։- Եւրոպական Յանձնաժողովը Չորեք- յարթի օր պիտի քննարկէ Թուսիոյ Հետ երկար տեւողութեան վրայ ուժանիւթի մարզին մէջ ուժ- մովարական գործակցու- թիւն մը մշակելու առա- ջարկները, յայտնեց Յանձ- նաժողովին մէկ րանները, Երկուշաբթի օր:

Բանբերը՝ Ճոն Թոմս, ըսաւ, որ քննար- կուող պաշտօնը չէ, թէ «պէտք է ներկայի առեւտրական կարեւոր

յարարեցութիւնները վե- րածենք երկար տեւողու- թեան վրայ ուժանակաւ- կան գործակցութեան, որ- մէ երկու կողմերը մեծ շահ պիտի ապահովեն»:

Արեւմտեան Եւրոպա- անցեալ ամիս լայնածիր- րոյցները դիմադրուած էր՝ ուժանիւթի բարձր սակերուն պատճառով: Բեռնատար փոխադրա- կաւերու վարորդներու եւ երկրագործներու կող- մէ պաշարումներ Ե- Միութեան քանի մը եր- կիրներ անգամայնուած

էին, ճնշումներ ի գործ- ղնելով Ե. Միութեան ղե- կավարներուն վրայ, որ միջոցներ գտնեն ուժա- նիւթի սակերը կրճատելու համար:

Թուսիոյ Հետ աւելի սերտ գործակցութիւն մը կրնայ նուազեցնել պլոքի- ն ՕՓԷԲԻ երկիրներէն քա- րիւղի ներածումներէ կախեալ ըլլալու պարա- ցան եւ ըսաւ Ֆոլի, անիկա նաև օգտակար պիտի ըլ- լայ Ռուսիոյ տնտեսու- թեան կայունացման հա- մար:

ՓՈՒԹԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

ՆԻԻ ՏԵԼԼԻ, 2 (ՌՈՅ- ԹԸՐԸ)։- Ռուսիոյ նա- խագահ վլատիմիր Փուսին Երկուշաբթի գիշեր Հնդկաստան ժամանեց պաշտօնա- կան առաջին այցելու- թեան մը համար:

Հնդկաստանի ար- տաքին գործոց նախա- րար եւ բարձրաստի- ճան այլ պաշտօնա- տարներ ընդունած են պայն Տելիիի պիւնտ- րական Փալամ օդա- կայանին մէջ:

Կը նախատեսուի, որ այցելութեան ընթաց- քին երկու երկիրները «ռազմա վար կան գործակցութիւն մը»



Փուսին կ'ընդունուի Հնդկաստանի արտաքին գործոց նախարարին կողմէ:

մշակեն՝ վարկ տալու համար առեւտրին եւ յատկապէս՝ վէսքի վա- ճառքին:

ՍԵՁԵՐ ԿԸ ՊԱՇՏՊԱՆ ԶՐԱՄԱՆԱԳԻՐՆԵՐ ՎԵԹՈՅԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԻՐ ԿԵՑՈՒՄԸ

Թուրքիոյ նախա- գահ Ահմէթ Նեճմէթ Սեպեր Կիրակի օր յայտնած է, թէ կրա- վարական երկու հրա- մանագիրներու դէմ վեթօ դրած է ո՛չ թէ կա- ռավարութեան աշխա- տանքները խոչընդո- տելու համար, այլ օրէնքը պահպանելու նպատակով:

Ան հրապարակաւ առաջին անգամ ըլլա- լով կ'արտայայտուէր վարչապետ Պիլիքի Էճեմիտի այն ամբաս- տանութենէն ետք, թէ

նախագահը տնտեսա- կան կայունութիւնը կը վտանգէ:

Էճեմիտի եւ Մայի- սին ընտրուած նախա- գահ Սեպերի միջեւ գործակցութիւնը կեն- սական է Դրամական Միջազգային Ֆոնտին վորակցութիւնը վայելող հակասող բանալի ծրագիրի մը հեղափոխ- անքով:

Սակայն անցնող շաբթուան ընթացքին երկու անձնաւորու- թիւններուն միջեւ

լուրջ լարումներուն ծայր տուած է:

«Օրէնքն արեւելք գրուած են պաշտօնա- տարներու համար», ըսած է Սեպեր խորհրդ- դարանի բացման առի- թով խօսքի մը մէջ:

Միջազգային Ֆոնտինի հիմամբ չեն վարուի- ր, ասիկա հարցադրում- ներու դուռ կը բանայ պատմութեան ըմբռ- նումին մասին», դիտել տուած է ան:

Շարը՝ էջ 10

ԿԵՐ ԸՆՏ ԿԸ ՍԿՍԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

TS, BT, մասնագիտական արհեստագիտութիւն TDS ուսուցման լեզու, ֆրանսերէն եւ անգլերէն դասընթացքներ կ'ուստ առաջ եւ կ'ուստ ետք:

- Գործադիր քարտուղարութիւն
- Զբոսաշրջութեան պաշտօնեայ
- Գուցարաններու եւ հաստատութիւններու պաշտօնեայ
- Մանկավարժութիւն
- Դեմքի շարուն
- Գլխաւոր հաշուապահութիւն
- Զինարարական մարտեր
- Կայուն ծային առուծախ
- Ելեկտրոնիք
- Հաշուապահութեան եւ համակարգչային գիտութիւններ
- Համակարգիչներու ծրագրում
- Անտարական ձիւղ
- Վարչապետ
- Գլխաւոր քարտուղարութիւն
- Հաշուապահական բաժին

ՊԻՊԼՈՍ ՀԻՄՆԱՐԿ

BYBLOS INSTITUTE

Dora: 01 874600-1
Haret Hreik: 01 273863-4
Furn el Chebbak: 01 293175-6

Sour: 01-874600
Հարկի Հրկ, 01-273863/4
Ֆլըն Երկր, 01-293175/6

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԸԱՍԱԺՈՂՈՎ՝ ՈՒԱԶԻՆԿՈՐԵՆԻ ՄԵՋ

Հայաստանի արտաքին գործոց նախարարության հասարակության հետ յարաբերություններում վարչա-
թիւնը կը հաղորդէ, թէ 27էն 28 Սեպտեմբեր Միացեալ
Նահանգներու Քոնկրէսի գրողարանի Մետիսքին ան-
ւան մասնաշէնքին մէջ տեղի ունեցած է «Հայկական
Ցեղամիջոցներու Գործունէութեան Կարգաւորում» թեմա-
յով համաժողովը: Համաժողովը տեղի ունեցած է Քոնկ-
րէսի գրողարանի եւ Հայկական Ազգային Հիմնարկի
հովանիին տակ:

Համաժողովին բացումը կայացած է Ողջակիցումի
գոհերուն յիշատակի թանգարանին մէջ, ուր ողջոյնի
խօսքով հանդէս եկած են թանգարանին տնօրէն Իր-
վինկ Կրինզլըրը եւ Հայկական Ազգային Հիմնարկի նա-
խագահ Ռոպէրթ Գալուստեան:

Համաժողովին հիմնական զեկուցողը Օթթոբրտի հա-
մալարանի դասախօս Մարթին Կլայբրիթն էր: Խօսք
առին նաեւ Ռիչըրտ Յովանէսեան, Վահագն Տատըր-
եան, Ճէյ Ուինթըր (Քէյմպրիձի համալսարան), Լէօ Ռի-
պպօն (Ճորձ Ուաշինկթընի անուան համալսարան),
Ճոն Քուրթըր (Ուիսկոնսին համալսարան), Լոյս Ամպ-
լոյշը (Նեպրաքայի համալսարան), Թոմըս Լենքրոս
(Քալիֆորնիոյ համալսարան) եւ ուրիշներ:

Համաժողովի աշխատանքներուն մասնակցած է նա-
եւ Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպան
Արման Կիրակոսեան:

ԺԱՆ ՏԷՐ ՄԵՐԿԵՐԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՍԼՈՎԱՔԻՈՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

Վերջերս Սլովաքիոյ մայրաքաղաք Պրախիսլաւայի
մէջ տեղի ունեցած դասական երաժշտութեան նուիր-
ւած համալսարանին փառատօնին ելոյթ ունեցաւ հա-
յազգի ջութակահար Ժան Տէր Մերկերեան:

Ժան Տէր Մերկերեան Սլովաքիոյ Ֆիլհարմոնիայի
համերգային դահլիճին մէջ, լեհ խմբավար Թատէուշ
Սթիբորի Կալայի նուագակցութեամբ, կատարեց Արամ
Խաչատրեանի ջութակի քունկերոն: Համերգը պսակ-
եցաւ մեծ յանդուրժեանքով եւ ներկայներուն փափաքին
վրայ Տէր Մերկերեան նուագեց երկու գործ եւս:

Համերգէն ետք, կազմակերպչը՝ «Արմէս» ընկերակ-
ցութիւնը, ի պատիւ Ժան Տէր Մերկերեանի, հիւրասի-
րութիւն մը կազմակերպեց, որուն ներկայ գտնուեցան
Սլովաքիոյ խորհրդարանի եւ կառավարութեան անդամ-
ներ, դեսպաններ, աւստրալացի համալսարանի ներկայացու-
ցիչներ եւ հիւրեր՝ Աւստրիայէն, Լեհաստանէն, Չեխիա-
յէն եւ Հունգարիայէն:

ԻՐԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐ ՄՏԱԴԻՐ ԵՆ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԻՄՆԵԼ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ

29 Սեպտեմբերին իրանական «Իրան Խորթ» ըն-
կերութեան կողմէս տարածքի վերահսկիչ Հուշեմ
Թաճիք Հայաստանի Լրագրողներու տան մէջ տուաւ
մասնով ատուիս մը, որուն ընթացքին ըսաւ, թէ ընկե-
րութիւնը մտադիր է Հայաստանի մէջ հիմնել ինքնա-
շարժներու արտադրութեան հայ - իրանական ձեռ-
նարկութիւն մը: Ընկերութիւնը այդ նպատակով պի-
տի գերդէ մօտ 10 միլիոն տոլար:

Նշե՛ք, որ 23էն 30 Սեպտեմբեր Հայաստանի մէջ
տեղի ունեցան ընկերութեան կազմակերպած ցուցա-
հանդէսը, ուր ներկայացուած են միացեալ արտադ-
րութեան 17 տեսակի «Մերսուս» Պեճակ, «Փեօօ» ըն-
կերութեան, մարդատար մեքենաներ, օթոպիւսներ եւ
միքրօպիւսներ:

Մասնով ատուիսի կազմակերպիչները յայտնեցին,
որ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն
հոշակման 170 մասնակի սոնչութեանը 2001 թուական
ին, ամբողջ տարուան ընթացքին, կը պատրաստուին
հայկական կողմին անվճար օթոպիւսներ տրամադրել
ուսանակատարութիւններու կարիքներուն համար:

Նոյն ծիրին մէջ իրանահայ գործարար Վահէ Օհան-
ջանեան ըսաւ, որ իրանեան կողմը մտադիր է յառաջի-
կային կայանայիք Յունաստան - Հայաստան - Իրան
միացեալ գործարարական համաժողովին ներկայացը-
նել նախագիծ մը՝ Հայաստանի մէջ արտադրութեան ինք-
նաշարժները Յունաստանի մէջ վաճառելու համար:

Ըստ «Իրան Խորթ»-ի Հայաստանի մասնաճիւղի
պատասխանատու Յովակ Թամասեանի, ցուցահան-
դէսին ներկայացուած ինքնաշարժները մասնավճար-
ով պիտի ծախուին: Ինքնաշարժները ինքնաշարժներու
նուագագոյն արժէքը 7,5 հազար, իսկ բեռնատարնե-
րուն՝ 25 հազար տոլար է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

15 Սեպտեմբերին Միացեալ Նահանգներու Թեննիսի
չըջանի Մեմֆիս քաղաքի «Պրոքս» թանգարանին մէջ
տեղի ունեցաւ 19րդ դարու վերջաւորութեան եւ 20րդ
դարու սկիզբի հայկական աւելի քան 40 գորգերու ցու-
ցահանդէսին բացումը, որուն մասնակցեցաւ նաեւ
Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպան Ար-
ման Կիրակոսեան:

Ցուցահանդէսը կանգնակերպած էր ամերիկահայ Հայ-
կական գորգերու ընկերութիւնը:
15էն 17 Սեպտեմբեր, ցուցահանդէսին գուզընթաց,
ընկերութիւնը կազմակերպած էր գլխաժողով մը, որուն
մասնակցեցան Արթուր Թեմիսեան, Քանադայէն եւ Միացեալ
Նահանգներէն գորգավաճառներ եւ մասնագէտներ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ «ԹԵԼԵԹՈՆ 2000»Ի ԱՌԻԹՈՎ

Հինգշաբթի, 28 Սեպտեմբերին, «Հայաստան» Հա-
մահայկական Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի
յանձնախումբի տնօրէն Զաւէն Խանճեան տուաւ
մամլոյ ատուիս մը, որուն ընթացքին խօսեցաւ 23 Նո-
յեմբերին տեղի ունենալիք «Թելեթոն 2000»-ի նախա-
պատրաստական աշխատանքներուն մասին:

Խօսք առաւ նաեւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտ-
եան թեմի առաջնորդ Վաչէ արք. Յովսէփեան, ու ըսաւ,
թէ այս նախաձեռնութիւնը ամէն հայու նուիրական
պարտականութիւնն է:

Յայտնե՛ք, որ այս տարուան թէլեթոնին իրենց գործ-
նական մասնակցութիւնը պիտի բերեն «Հայաստան»
Հիմնադրամի Արեւելեան Ամերիկայի եւ Ֆրանսայի
գրասենեակները, ինչպէս նաեւ՝ Երեւանի գրասենեա-
կը, ղեկավարութեամբ Վահան Տէր Ղեւոնդեանի:
Այս առնչութեամբ Նիւ Եորքի մէջ գումարուած է
ժողով մը, մասնակցութեամբ Ամերիկայի, Ֆրանսայի
եւ Քանադայի գրասենեակներու ներկայացուցիչնե-
րուն: Ժողովին ընթացքին ընդունուած է «Ապագան
կիրայի ալտր» կարգախօսը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՍԿՍԱԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Հայաստանի մէջ Ֆրանսական համալսարանը, իր վար-
չական խորհուրդի անդամներուն, Հայաստանի մէջ հա-
ւատարմագրուած դեսպաններու, Հայաստանի կրթու-
թեան եւ գիտութեան նախարարութեան ներկայացուցիչ-
ներու, ուսանողներու եւ անոնց ծնողներուն մասնակցու-
թեամբ, Ուրբաթ, 29 Սեպտեմբերին նշեց իր առաջին կրթա-
կան տարուան սկիզբը:

Կրթական տարեշրջանը սկսելու առնչութեամբ ուսա-
նողներուն բարի ուսումնառութիւն մաղթեցին Հայաս-
տանի Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» խմբակցու-
թեան նախագահ Արթուր Բաղդասարեան, Հայաստանի
մէջ Ֆրանսայի դեսպան Սիշէլ Լեկրա, Գերմանիոյ դես-
պան Ֆոլքմեր Չայց, Սեմ Քրիտանիոյ դեսպան Թիմոթ
Տոնո, Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար-
ութեան կրթական բարեփոխումներու կեդրոնի տնօրէն
Վիքթոր Մարտիրոսեան:

Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Սիշէլ Լեկրա
խօսք առաւ եւ ըսաւ, որ Հայաստանի մէջ Ֆրանսական
համալսարանը պիտի ըլլայ երկրակազմակերպութեան
կան օժանդակ, որուն համար ան ունի բոլոր կարելիու-
թիւնները եւ արհեստավարժ դասախօսական կազմ, եւ
դիմադր. բայց անաշառ մըրցումով ընտրած ուսանողներ,
եւ հրաշալի շէնք, եւ աջակցութիւն այն երկիրներու
կառավարութիւններուն, որոնց դեսպանները ներկայ էին
հանդիսութեան:

Հանդիսութեան մաքրտին համալսարանի երեք իրա-
ւաքանական կառավարման եւ տնտեսագիտական բա-
ժանմունքներու առաջին կարգի 150 ուսանողներ բախտ
ունեցան լուսանկարուելու դեսպաններուն եւ համալսա-
րանի վարչական խորհուրդի անդամներուն հետ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԶՈԼԷՃ ՎԵՐԱՄՈՒՏ

Զոլէճիս ուսումնական 2000 - 2001 տա-
րեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ
կը շարունակուին ամէն օր կէսօրէ ետք ժամը
3.00էն 6.00, բացի Չաբաթ օրերէն, հետեւեալ
մասնագիտութիւններու համար:

- Դաշնամուր 7էն 10 տարեկան
- Ջութակ 7էն 10 տարեկան
- Թաւջութակ 7էն 12 տարեկան
- Flûte Traversière 8էն 10 տարեկան
- Flûte à Bec 8էն 10 տարեկան
- Շուկ 8էն 10 տարեկան
- Շեփոր (Trompette) 15տն վեր
- Trombone 15էն վեր
- Գալարափող (Cor) 15էն վեր
- Չայնամարդութիւն 16տն վեր
- Բլաթիք 12էն վեր
- Saxophone 12էն վեր
- Կիթառ 10տն վեր
- Երգեհոն (Orgue) 10տն վեր
- Խմբավարութիւն

(Երաժշտական որեւէ գործիքի իմացութիւնն ու
տիրապետութիւնը անհրաժեշտ է):
- Ստեղծագործութիւն (Composition):
(Դաշնակի տիրապետումը պայման է):

●Բոլոր մասնագիտութիւններուն զուգահեռ
աշակերտները անհրաժեշտօրէն (կամ պար-
տադիր կերպով) կը հետեւին երգութեան
(solfege), տեսութեան (theorie), ներդաշակա-
գիտութեան (harmonie) եւ երաժշտութեան պատ-
մութեան ամբողջական ծրագիրներուն:

●Ուսումնական նոր տարեշրջանին պիտի
կիրարկուի նաեւ մասնագիտական (profes-
sionnel) խորացումի յատուկ ծրագիրը, մաս-
նաւորաբար շնորհալի եւ խոստմնալից աշա-
կերտներու համար:
Յիշեցնե՛ք, որ զոլէճիս անձնակազմը ամ-
բողջացած է փորձառու եւ որակաւոր նոր
ուսուցիչներով:

ՎԵՐԱՄՈՒՏ՝ 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2000

ԾԱՆՕԹ. Նկատի ունենալով երկրի տնտե-
սական ծանր վիճակը, տնօրէնութիւնս յառա-
ջիկայ տարեշրջանին նախատեսած է կրթաթը-
շակի սակերու զգալի նուազում սատարելու
համար երաժշտական կրթութեան տարածու-
մին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵՐԱԺԵՏԱՆՈՅԸ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԶՈԼԷՃ

Ա. ԵՆՈՒՆԴ, ԼՊԱՏԱԿ, ԵՐԱԳԻՐ

Համազգային «Բարսեղ Կանաչեան»
երաժշտական ջոլէճը իրականացումը կը
համազգայնական հին երագի մը, որ կը
մեկնէր կենսական անհրաժեշտութեան մը
հրամայական թելադրանքէն եւ կը ձգտէր
զարգութիւն մէջ գոյութիւն ունեցող մեծ բաց
մը գոցելու հիմնական առաջադրանքէն:

Մեր երաժշտանոցը հիմնողները առա-
ջին հերթին կը հետապնդէին հանրակըն-
թական-դաստիարակչական նպատակ-
ներ. այդ իմաստով ջոլէճին ուսումնական
առաջին ծրագիրը պատշաճեցուած էր ՀԱ-
ՍԱԶԳԱՅԻՆ ազգային հանրօգուտ առա-
քելութեան սկզբունքներուն, գորս կարե-
լի է խտացնել եւ բանաձեւել հետեւեալ
ձեւով. - ոչ շահադիտական միջոցներով ե-
րաժշտական կրթութիւն ջամբել առաւե-
լագոյն թիւով հայ աշակերտներու եւ նը-
պատել անոնց երաժշտական կազմաու-
րումին արթնցնելով անոնց մտադաշ հո-
գիներուն մէջ հետաքրքրութիւն եւ սեր այդ
վեմ արուեստին հանդէպ, զարգացնել
անոնց գեղարուեստական ճաշակը հայ եւ
միջազգային հեղինակներու գործերու
ունկնդրութեամբ եւ կատարումով միա-
ժամանակ առիթ եւ կարելիութիւն ընծա-
յելու անոնց իրենց կատարողական տա-
ղանդը զարգացնելու եւ մշակելու մեր
երաժշտանոցի մէջ:

Այս հասկացողութեամբ, սկզբնական
շրջանին զուտ ասպարէզային եւ մասնա-
գիտական մօտեցումը անմիջական մտա-
հոգութիւն չըլլալով հանդերձ, «արհես-
տավարժութեան» հաստատումը աստի-
ճանական, զուգահեռ եւ հեռանկարային
ձգտում էր անոնց մտքերուն մէջ:

Բ. ԴԵՊԻ ԱՐԵՏԵՍԱԿԱՐԺՈՒԹԻՆ (ՓՐՈՑԵՍՈՐՆԱԼԻՏԷ)

Ներկայիս իր նոր տնօրէնին Երուանդ
Երկանեանի նշանակումով մեր երաժշտա-
նոցը բռնած է իսկական արհեստավար-
ութեան ճամբան, որ փաստօրէն, շուրջ
տասնամեակ (1991) մը առաջ երեսնի
Կոմիտասի անուան պետական երաժշտա-
նոցի հովանաւորութեան եւ գործակցու-
թեան համաձայնագիրով սկիզբ առած վա-
րձուտ գործընթացի մը տրամաբանական
շարունակութիւնն ու պատկանումն է. անոր
վերջնական հաստատումը մեր ջոլէճին
մերս այս հանգրուանին, կարելի է ապա-
հովել յենեմով հայրենի մասնագետներու
գործակցութեամբ վրայ եւ ներգրաւելով
զանոնց մեր «ընդհանրական գործին» մէջ.
անոր ծնողներու գիտակից վերաբերումը եւ
մերձեց ցուցաբերած հասկացողութիւնը
եւս կրնան մեծապէս դիւրացնել եւ արա-
զացնել այդ գործընթացը:

Արհեստավարժութեան ձգտումին զու-
գահեռ կ'ընթանայ սիրողական ծրագիրը,
իր աւելի բնախնդիր ծրագրումով մշա-
կութային, հանրակրթական, դաստիա-
րակչական, քարոզչական, տնտեսական,
ընկերային եւ այլ մտահոգութիւններով:

Գ. ԱՌԱՆՉՆԱՅԱՏԱԿՈՒԹԻՆՆԵՐ

Համազգային «Բարսեղ Կանաչեան»
երաժշտական ջոլէճը կը գտնուի շուրջ
երաժշտական մասնօրհնակ միւս հաստա-
տութիւններէն առաջին հերթին իր պատ-
կանելիութեամբ, որ կը ճշդ ու կը բնորոշ
անոր գործունէութեան զաւտելու հիմնա-
կան սկզբունքները միաժամանակ:

Պատկանելիութեան իր այդ հանգա-
մանքով է, որ ան հանրօգուտ ծառայու-
թեան կողմը կը ստանայ. ինչ որ զինք
ամբողջութեամբ գերծ չպահելով հանդերձ
զուտ տնտեսական մտահոգութիւններ,
պարտականութիւն եւ առիթ կու տայ անոր
իր գործունէութիւնը տարածելու նաեւ
հանրակրթական մարզերու եւ մակար-
դակներու վրայ, նպատակը համար ժո-
ղովրդային լայն խաւերու երաժշտական
դաստիարակութեան:

Նոյն հետեւողութեամբ եւ հասկացողու-
թեամբ կը շեշտուի նաեւ մեր երաժշտա-
նոցին ազգային դիմագիծը, որ ուղղակի
յանձնառութեան տակ կը դնէ մեզ լծուե-
լու եւ նուիրուելու հայապահպանման եւ
հայ մշակոյթի տարածման ու ժողովրդա-
կանացման աշխատանքին: Այդ ծիրէն
մերս մեր երաժշտանոցին ազգային պատ-
կանելիութիւնը կ'իմաստաւորուի Հայ
Երաժշտութիւնը դասապահի եւ դասանիւ-
թի ստեղծումով, որ Համազգայինի երա-
ժշտանոցին իւրայատուկ ու անձեռն
պատուաբեր նախաձեռնութիւնն է. ան
նոյն առեւ «Բ. Կանաչեան» ջոլէճէն մերս
Համազգայինի գերագոյն ձգտումն ու կրթ-
ագործումն է եւ այն ստեղծողներու թրագ-
ներուն իրականացումն ու պատկանումը միա-
ժամանակ: Այս գերագոյն իրագործումով
է, որ «Բ. Կանաչեան» ջոլէճի գոյութիւնը
լիովին կ'իմաստաւորուի ու կ'արդարա-
նայ: Այս դասանիւթին միտնապահելիօրէն
կը կապուի հայոց պատմութիւնը ու հայ
մշակոյթը տարածելու եւ ժողովրդակա-
նացնելու զուգահեռ աշխատանքը:

Այս պայմանաւորումներով կը հիմնա-
ւորուի նաեւ մեր երաժշտանոցին միւս
բոլոր իւրայատուկութիւնները, որոնց շար-
քին

●Իր միութեանական պատկանելիու-
թեան հանգամանքով ոչ շահադիտական
ձեռնարկ ըլլալուն «Բարսեղ Կանաչեան»
երաժշտական ջոլէճը նիւթակաւ իմաս-
տով համեմատաբար շատ աւելի մատչե-
լի է:

լի է, քան ոչ պետական երաժշտական միւս
բոլոր հաստատութիւնները, ինչ որ առիթ
կու տայ առաւելագոյն թիւով երաժշտա-
ւերներու եւ ծնողներու փորձելու իրենց
եւ իրենց զաւակներուն երաժշտական
բնատուր ծիրքերը եւ այլապէս յագուող
տալու իրենց երաժշտական ծարաւին. մեծ
դիւրութիւն մը, որ կրնայ առիթ տալ իսկա-
կան տաղանդներու յայտնաբերման եւ
երաժշտասէր «բանիմաց» հասարակու-
թիւն պատրաստելու ծառայել:

●Նոյն հանգամանքին բերումով, իբ-
րեւ հանրակրթական հաստատութիւն,
հասկանալի է, որ յատուկ ուշադրութիւն ցու-
ցաբերուի նաեւ սիրողական ծագում ու-
նեցողներու նկատմամբ, որոնց ծրագիրը
եւս, արհեստավարժներուն զուգահեռ, կը
կիրարկուի լրջութեամբ եւ մեծ բնախնդ-
րութեամբ. այստեղ տարիքի եւ մակար-
դակի եւս խտրութիւն չկայ:
Հանրակրթական ծառայութեան այս
նոյն ծիրին մէջ նորութիւն են երաժշտա-
կան ժողովրդային Լաւրանը եւ երաժշտ-
ական վիտե՛ - ալոմըք, որոնք այլա-
պէս դուրս կը մնան ակադեմիական ծրա-
գիրներէն: Սակայն մեր զարուգ ազգա-
յին եւ համազգայնական միջավայրին մէջ
անոնց կենսական պահանջը եւ միաժամա-
նակ ծրագրային լրացումներն են:

●Մասնագիտական եւ ասպարէզային
մտահոգութիւններու կողքին, մեր երաժշ-
տանոցը կը հետապնդէ ազգային - դաս-
տիարակչական նպատակներ, որոնք ա-
նոր կը հաղորդեն ընտանեկան մթնոլորտ
եւ ջերմ միջավայր զանազան մակարդակ-
